« ԹՈՂԼ ՏԱՌԸՆԴ ՄԱՆԴ ՏՂՈՑԸՆ ՈՐ ԻՆՔԻ ԴԱՆԴ » : ՂՈՒԿ. ԺԸ. 16։

ՀԱՏՈՐ Ե. ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ· ՓԵՏՐՈՒԱՐ 1· 1876· ԹԻՒ 2

ՄԱՏԱԿ ԱՌԻԾ ՄԸ ԵՒ ԿՈՐԻՒՆՆԵՐԸ

ԱՌԻԾՆԵՐՆ ԻՐԵՆՑ ԲՆԱԿԱՐԱՆԻՆ Մ Է Ջ

Ա.յս առիւծները ոչ թէ անտառի մէջ, այլ մեծ քաղաքի մը մէջ անոնց համար շինուած յատուկ բնակարանի մը մէջ են։ Թէև անոնք այս բնակարանին մէջ բանտարկուած են, սակայն կ'երևի թէ ըստ բաւականին հանդիստ են։ Առիւծի կորիւնները կատուի ձագերուն պէս կը խաղան, և անոնց մայրերը զանոնք կը դիտեն։ Մատակ առիւծը միշտ շատ կը սիրէ իր կորիւնները, և եթէ մէկը զանոնք դողնայ կամ անոնց ձեռս մը ընէ, սաստիկ կը բարկանայ, և ամէն կերպ վտանգի կը դիմադրաւէ իր ձագերն աղատելու համար։ Ափրիկէի մէջ Անգղիացի նաւաստի մը անտառ մը դնաց պտտելու. հոն մատակ առիւծի մը հանդիպելով շատ վախցաւ։ Թեղճ նաւաստին չէր կրնար փախչիլ և աղաչել։ Առիւծն եկաւ անոր քովն կայնեցաւ. ասոր վրայ նաւաստին առիւծուն զարմանքի փոխուեցաւ, և չորս դին նայելով տեսաւ որ մեծ կապիկ մը իր գրկաց մէջ երկու առիւծի կորիւն առած և ծառի մը վրայ նստած է։ Նաւաստին ասկէ հասկցաւ որ առիւծն իրմէ օդնութիւն խնդրելու եկած է։ Առիւծը ծառը կը դիտէր միշտ այնպէս, ինչպէս կատու մը կը դիտէ թռչունը ղոր որսալ կ'ուզէ։ Նաւաստին չէր կրնար ծառին վրայ ելլել, ուստի որոշեց ծառը կտրել։ Բարեբախտաբար հետը կային մը ունէր, և կայինով յաջողեցաւ ծառը կտրել։ Երբ ծառը գետին տապալեցաւ առիւծն իսկոյն կապիկին վրայ նետուելով զայն յօշոտեց, և իր կորիւնները լիզել սկսաւ։ Փիչ մը ետքը եկաւ նաւաստիին ձեռքերն և ոտքերն ալ լիզեց իր շնորհակալիքը յայտնելու համար. ապա կորիւններն առաւ և անտառին մէջ անհետացաւ եղաւ։ Նաւաստին ալ իր նաւը դարձաւ, և այս դէպքը ուրախութեամբ պատմեց իր ընկերաց։

Տղայոց Աւետաբերի համար

ԱՌԱՆՑ ԹՕՍԵԼՈՒ ՍՏԵԼ

Վարժապետ մը իր աշակերտներէն աղջկան մը, «Ա՛հ, Մարիամ, որչափ կը ցաւիմ որ սուտ խօսեցար» ըսաւ։ Աղջիկն անոր, «Սուտ խօսեցա՞ր, կ'ըսես, մինչդեռ ես բերնէս խօսք մ'անգամ չհանեցի» ըսաւ։ Վարժապետն ըսաւ, «Այո, դիտեմ որ բերնէդ խօսք չհանեցիր. սակայն գործով Աստուծոյ

առջև սեղյակ։ Ինչպէս որ մարդ խօսքով կը սաէ, այնպէս ալ գործքով կը սաէ. և Աստուած մարդու սիրտը կը քննէ»։ Մարիամ ամօթէն սկսաւ վար նայիլ, և վարժապետը տեսնելով որ աղջիկը քարէ տախտակին վրայ արտասուք կը թափէր, անոր ըսաւ, «Չիմա գքեզ կը համոզեմ որ սուտ խօսեցար։ Աննա իր ընկերոջ հետ դասը հեգելու համար երբ տեղէն ելաւ ու մէջտեղը եկաւ, իր գիրքը դրասեղանին վրայ թողուց։ Դուն ալ քու գիրքդ տունը մոռցած ըլլալով, անոր գիրքըն առիր որ դասդ սորվիս, եաքը դիպուածով գրքին վրայ մելան թափեցաւ, և դուն վախնալով թէ Աննա քեզ պիտի բարկանայ, գիրքը գոցեյիր և Լուսիային դրասեղանին վրայ դրիր։ Աննա դասը լմնցնելէն եաքը, երբ իր տեղը դարձաւ և իր գիրքը հարցուց, դուն անոր պատասխան չտուիր, և այնպէս ձևացուցիր թէ անոր գրքին ուր ըլլալը չես գիտեր, մանաւանդ աւելի ուշադրութեամբ գործեդ. պարապելով, աչքդ շարունակ կարիդ վրայ անկած բնաւ չէիր կրցած նայեր, և Աննային խօսքերը չլսելու կը զարնէիր։ Վերջապէս Աննա իր գիրքը Լուսիային դրասեղանին վրայ դնելով, «Վարժապետ, գիրքս ահա Լուսիային քովը դտայ, ընորհք ըրէք անոր ըսէք որ իր գիրքը գործածէ', ըսաւ և գիրքն առաւ։ Աննա իր գիրքին վրայի արատը երբ տեսաւ, գիտես, որչափ ցաւեցաւ։ Աննա մաքրասէր և զգուշաւոր աղջիկ է. ուստի կ'աշխատի իր բոլոր բաները մաքուր պահել և իր մաքուր գիրքն աղտոտած տեսնելով չկրցաւ իր ցաւը զսպել և ամենուն առջև լալ սկսաւ։ Դուն տեսար որ ան կուլար և Լուսիան կը յանդիմաներ, և լսեցիր նաև որ Լուսիա կ'ըսէր. 'Ա՛յս արատն ես չըրի, գրքիդ հոս ըլլալն ալ չէի գիտեր', բայց այս ամենուն վրայ բան մը չըսիր։ Դուն այս միջոցը բռնեցիր որ քու վրադ չարակուսինք. սակայն ըրածդ սահմռկումներն չէ՞ր։ Աստուած քու սիրտդ կը ճանչնայ, ուստի այս ըրածդ սահմռկումներն չհամարէց»։

Մարիամ սկսաւ լալ և ըսել, « Չէի գիտեր որ ըրածս այնչափ դէշ բան է, այսուհետև այնպիսի բան չեմ ըներ։» Աստր վրայ վարժապետն ըսաւ, «Ես ալ այնպէս կը յուսամ սիրելի աղջիկս. ահա կը տեսնես որ բերնէդ առանց խօսք մը հանելու սուտ խօսած եղար։ Եթէ ուղղակի Աննային պատասխան տայիր, 'Ես չըրի' պիտի ըսէիր, այնպէս չէ՞, ահա քու գործդեդ մենք այնպէս հասկցանք։ Կը կարծես թէ գործով սուտ խօսիլն Աստուծոյ առջև խօսքով ստելէն նուազ մեղք է։»

ՀԱՅԻ ՊՏՈՒՂ

Ժամանակաւ վտքը իշխանուհի մը կար, որուն ըսուեցաւ թէ ժողովուրդը հայ չտնենալուն համար սովէն կը տանջուէր։ Իշխանուհին աւելի տեղեկութիւն ունենը ֆոլկլայֆ և ֆոֆֆ վրայ քան թէ աղքատութեան վրայ. ուստի աչքերը խաչը խաչը բանալով ըսաւ. «Եթէ հայ չունին, ինչո՞ւ համար պէօրեկ չեն ուտեր։»

Ես ալ դրքի մը մէջ կարդալով թէ կան ծառեր որոց վրայ հայ կը բուսնի, և կան ուրիշ ծառեր որոյմէ կաթ կը վաղէ, ինքիրենս ըսի. «Ի՞նչպէս կրնայ ըլլալ որ այն երկրին բնակիչները անօթի կամ ծարաւ ըլլան,» և յիշեցի այն փոքր իշխանուհին։

Եթէ կ'ուզէք որ հայն ինքնին բուսնի, պէտք է որ երթաք Խաղաղական ովկիանոսի այն կղզիներն ուր վերի պատկերին մէջ տեսնուած տարօրինակ մարդիկ կը բնակին։ Հայի ծառերը կաղնւոյ ծառերու չափ բարձր են, և անոց պտուղը կիտրոնի չափ մեծ է և կիտրոնի պէս դեղին կեղև ունի։

Մարդիկ ամէն օր թարմ թարմ կը ժողովեն այն պտուղն և իրենց տան յատակը ծակ մը կը բրեն (վասն զի առանց տուները տախտակամած չունին,) և կրակ վառելով այնչափ կ'եփեն այն պտուղը որ կը սեւնայ։ Եաքը, երբ այնչափ կը պաղի որ առանց ձեռքերնին այրելու կրնան ձանի բռնել, այրած մասը կը հանեն և մէջը կ'ուտեն։ Անտարակոյս դուք կը խորհիք թէ նոր տեսակ մը հայ է այն։ Այս պտուղը պէտք է ժողվել և եփել ամէն օր։ Բայց այնտեղի բնակիչները մանր կտորներու կը բաժնեն և արեւի մէջ կը չորցնեն ղայն, որ պաքսիմատի պէս կ'ըլլայ։ Որովհետև չորս ամիս հայի ծառը պտուղ չտար, մարդիկ այն ժամանակին համար չոր հայ կը հարթարեն, և այն հայը հողի մէջ թաղելով կը պահեն։ Հայի ծառէն տեսակ մը հիւթ կը վաղէ, որմէ տեսակ մը ռում կը չինուի։ Այսպէս միևնոյն ծառը թէ հայ և թէ հայկին հետ ուտելու անուշեղէն կը մատակարարէ։

Բայց աւելի զարմանալի է կովէ ծառն որ կ'աճի հարաւային Ամերիկայի մէջ։ Այս ծառը կը բուսնի չոր և տաք երկիրներու մէջ ուր քիչ անգամ անձրեւ կու գայ։ Ծառն ինքնին բոլորովին չոր երեւոյթ. ունի, բայց երբ ամէն առաւօտ արեւը ծագելու առեն մարդիկ դանակներով և չիչերով կ'երթան և ծառին կեղեւին վրայ փոքր ճեղքեր կը բանան, առատ հիւթ կը վաղէ անկէ։ Կ'ըսուի թէ չատ հիւթ կը վաղէ ամէն ամսոյ 15ին, և քիչ ամսոյն վերջը։ Այս ծառերէն վաղած հիւթին համը շատ կը նմանի կաթի համին, և եթէ այս կաթնանման հիւթը քանի մը ժամ առնի մը մէջ մնայ, երեսը թանձր սեր կը կապէ։ Սակայն զարմանալին այն է, որ այս ծառին կեղեւն աղայուելով հայ կը չինուի, և մարդիկ երեսնց հայն ու սերը միանգամայն միևնոյն ծառէն կ'առնեն։

Այս մարդիկ կ'ապրին այնպիսի երկրի մը մէջ ուր հայն ինքնին կը բուսնի, սակայն անոնք այն հայը պատրաստելու և պահպանելու համար աշխատելու են։ Վասն զի Աստուծոյ օրէնքն է, որ չաշխատողը չի կրնար ուտել. այս օրէնքը կը վերաբերի թէ՛ այն երկրին ուր հայն ինքնին կը բուսնի, և թէ այն երկրին ուր կ'ապրէը վերոյիշեալ իշխանուհին, որ չէր կրնար հասկնալ թէ ինչպէս մարդիկ անօթութենէ կը տանջուին։

ՄԱՐԿՈՍԻ ՁՄԲՈՐԴՈՒԹԻՒՆԸ

Մարկոսի հայրն երուսաղէմէն վտխանակ Յոպպէ դառնալու և անկէ չոգենաւ նստելու, միտքը դրաւ ցա-

մաքի ճամբով Դամասկոս երթալ։ Ասոր վրայ Մարկոս ուրախ եղաւ, վասնզի, եթէ օդը ցուրտ և անձրեւոտ ըլլայ, չոգենաւով ճամբորդութիւն ընող մարդը պաղէն կը դողդողայ. իսկ եթէ օդը բաց և տօթակէզ ըլլայ, ճամբորդը տաքէն կ'այրի. կամ եթէ հովերն և ալիքները նաւը տարուբերեն, ծովու վրայ դրնաւորը շատ կը փափաքի ցամաք ելլել։ Սակայն ցամաքի վրայ ճամբորդ մը կընայ հեռի, և կամ ձիով կամ կառքով երթալ, ինչպես որ կ'ուզէ. և եթէ հանդիպ կ'ուզէ, տեղ մը կը կենայ։

Թէև տաստիկ հովերը փչեն, ցամաքի վրայ մարդուն դլուխը չի դառնար և սիրտը չի խառնուիր, բայց ծովու վրայ կ'ըլլան այս բաները։ Մարկոս այսպէս խորհելով կ'ուրախանար որ իրենց ճամբորդութիւնը ցամաքէն պիտի ըլլար։ Բայց ճամբորդութեան առաջին օրէն Մարկոս ... ատ որ ցամաքային ճամ... ութիւնն ալ իր նեղութիւններն ունէր, վասն զի ... տեսանը, որ զՄարկոս ... անոր հայրը պիտի տա...

էր, Մարկոսին համար փոխանակ էշ մը բերելու, ինչպէս որ խոստացած էր, ջորի մը բերաւ։ Մարկոսի ջորին միւս ջորիներուն հետ չէր երթար, այլ ճամբէն դուրս կ'ելլէր երբեմն, և զառիվայր կամ խորտուբորտ տեղերէն կամ շատ արագ երթալով, և կամ յանկարծ կենալով, ինկալու վտանգի մէջ կը դնէր զՄարկոս, որ այս պատճառաւ շատ կը վախնար։ Անգամ մը ջորեպանը Մարկոսին քով եկաւ, և տաստիկ ծեծելով Մարկոսի ջորին կ'ուղէր ղայն սխալ ճամբէն դարձնել։ Մարկոս վախնալով ուզեց քալելով հետ դառնալ և ջորեպանն իջեցուց զՄարկոս ջորիէն։ Այն իրիկունը որ ճամբորդները Նապլուս հասան, Մարկոսին ջորին առուի մը մէջ կեցաւ, և զՄարկոս իր վրայ ունենալով պառկեցաւ ջուրին մէջ։ Ուստի Մարկոս խորհեցաւ որ չոգենաւով երթալը թերևս լաւագոյն եղած պիտի ըլլար։ Նապլուսի մօտ Մարկոս և անոր հայրը տեսան այն ջրհորը որուն քով Քրիստոս Սամարացի կնոջ հետ խօսեցաւ, և Մարկոսի հայրն ըսաւ անոր թէ, այն ջրհորը Յակոբ նահապետ փորած էր։ Նապլուսի մէկ կողմը տեսան Գեբալ լեռը, և միւս կողմը՝ Գարիզին լեռը, ուր քահանայք Մովսէսի օրհնութիւնները և անէծքները կարդային (Բ. Օր. ԻԷ և ԻԸ. և ՅԵ. Ի.)։

Երկրորդ օրը Մարկոսի ջորւոյն վրայ հայրը հեծաւ, և իր ձիուն վրայ հեծցուց զՄարկոս, բայց Մարկոս ձիուն վրայ հեծնելով աւելի դոհ չեղաւ. քանզի ձին ծեր էր, և այնչափ դանդաղ կը քալէր որ Մարկոս չկանալով քալեցնել ձին, շատ յոգնեցաւ, և անոր արունքն ու բազուկները ցաւեցան։

ՆԱԶԱՐԵԹԻ ԱՂԲԻՒՐԸ

Բայց Մարկոս և հայրը այն օր ալ այնպէս երթալով, հետևեալ օրը հասան Նազարէթ, ուր երկու օր պիտի կենային հանգչելու համար։ Ճամբան շատ տեղերէ անցան, որ յիշատակ են Հին կտակարանին մէջ։ Տեսան նաև Իսրայէլի թագաւորաց աքքայանիատ քաղաքը, Սամարիա, որ հիմա Սեբաստիայէ կ'ըսուի, և Թէլ Տօթան ըսուած տեղը ուր կար աղբիւր մը, որուն համար Մարկոսի հայրն ըսաւ թէ, շատ հաւանական է որ այս աղբիւրն այն աղբիւրներէն մէկն է, ուր Յովսեփայ եղբայրները իրենց ոչխարներուն ջուր կը խմցնէին։ Մեր ճամբորդները տեսան նաև Աբրահամներու կարաւան մը որ իրենց ուղտերովը դէպ ի հարաւ, Եգիպտոս կ'երթային, և անոց գացած ճամբան այն ճամբան էր ուստի Իսմայէլացիք Յովսեփը տարին։ Եաքը անոնք Նազարէթ գային ուր տեղ Յիսուս ապրեցաւ իր տղայութեան ժամանակը։ Մարկոս հոն տեսաւ որ տղայք սափորներով կու գային աղբիւրէ մը ջուր առնելու, և կը խորհէր թէ արդեօք Յիսուս ալ իր պատանեկութեան տարիները ջուր առնելու համար եկած այն աղբիւրէն։ Մարկոսի հայրն ըսաւ թէ չատ հաւանական էր որ Յիսուս ալ այն աղբիւրէն ջուր առաւ, վասնզի Յիսուս իր պատանեկութեան տարիները կը ծառայէր իր ծնողացը։

Մարկոս Սուրբ Գրոց մէջ յիշուած այնչափ տեղերն անձամբ տեսնելով, նոր եռանդով սկսաւ Աստուածաշունչը կարդալ։ Այս պատճառաւ կարծեմ թէ Մարկոս ուրախ եղաւ որ ծովով չեղաւ այն ճամբորդութիւնը։

Տղայոց Աւետաբերի համար.

ԹՂՃՄՏՍՆՔ

Մայր մը յաճախ խղճմտանքի վրայ կը խօսէր իր փոքրիկ աղջկանը, բայց սա միշտ կ'ըսէր որ ինք քնաւ չզդար թէ խղճմտանք ունի։ Օր մը փոքրիկ աղջիկն իր հաստակակից կարապետին հետ սանդուղին վրայ կը խաղար, և ահա մէկէն վազեց, սենեակը մտաւ, և «Մայրիկ, մայրիկ, լսեցի, ես լսեցի զայն» ըսաւ։ «Ինչ էր լսածդ,» հարցուց անոր մայրը։ «Խղճիս ձայնը լսեցի,» պատասխանեց աղջիկը. «խղճս ինձ խօսեցաւ, երբ կարապետ խեղճ մրջիւն մը դատ, և զայն կատր կատր ընել կ'ուզէր. ես խղճիս ձայնը լսեցի, և կարապետին ըսի որ մրջիւն սպաննել դէշ բան է։»

Աստր վրայէն քանի մը տարի անցաւ, նոյն աղջիկն, որ տասը տարեկան եղած էր, քանի մը ընկերներու հետ աղօթքի ժողով մը գնաց։ Հոն բան մը տեսան որ անոնց ծիծաղը շարժեց։ Բարեպաշտ և ծերունի կին մը անոնց խնդալը տեսաւ, և աղօթքէն ետքը փոքրիկ աղջիկն իրեն կանչեց և այնպիսի տաճն մը խնդալը արչափ անվայել և սխալ բան ըլլալն անոր խնացուց։ Այս աղջկան խիղճը, որուն ձայնը նա լսած էր քանի մը տարի առաջ, բոլորովին լուռ կեցած չէր։ Երբ ծերունի կինն այս աղջկան սխալմունքն անոր երեսը զարկաւ, աղջիկն անմիջապէս հասկցաւ։ Այս բանին վրայ իր ընկերաց հետ խօսելով ըսաւ թէ, «ես աւելի կը փափաքիմ որ Աստուծոյ Հոգւոյն օգնութեամբ մենք ամենքս ալ որոշենք այսուհետև

Աստուծոյ հնազանդ զաւկները ըլլալ»

Ան փոքրիկ աղջիկը հիմա մեծցած և կին եղած է, և իր անյողդողդ արդարասիրութեանը համար ամենէն կը յարգուի և կը սիրուի :

Խիզճն այն հզիւկ ձայնն է, զոր Աստուած մեր ներսիդին դրած է, որ մեր սխալմունքը մեզ իմացնէ : Ան պատմութեան մէջ յիշուած փոքրիկ աղջիկն իր մօրը, « Ես լսեմ, խզճիս ձայնը լսեմ,» ըսաւ . բայց այն ձայնն իւր մարմնաւոր ականջնե-լով չլսեց: Ան հզիւկ ձայնն անոր սրտին խօսեցաւ :

Ընթերցող մանուկ , դուն ալ ականջ կը դնէ՞ս այն քաղցր ձայնը լսելու: Զգոյշ եղիր պահել անոր բոլոր-նները, և ահա այն ատեն երջանիկ և օգտակար կ'ըլլայ քու կեանքդ : Եթէ անոր բոլորները չպահես , Աստուծոյ հաճելի չես ըլլար, այլ հաճելի կ'ըլլաս այն « մռնչող առիւծին որ կը պտըտի , ու կը փնտռէ թէ ով կրնէ : »

ԹՂԹԱՏԱՐ ՇՈՒՆԵՐ

Դուք ամէնդ ալ տեսած էք նամակ առնող սուրհանդակը (Ֆոֆոր) որ իր ձիերը քաղաքին մէջէն վազցնելով կ'անցնի, և սուրհանդակը պաշտպանելու համար անոր հետ գայող սահիկաններըը, որ յոգնած կ'երթան անոր եռանէն : Ան պատկերին մէջ ուրիշ տեսակ սուրհանդակ մը կը տեսնուի : Ան սուրհանդակը ձմեռ առն Գանատայի հեռաւոր կողմերն Անգլիոյ կառավարութեան նամակները կը տանի : Ան երկրին մէջ շատ տեղ ճամբայ չկայ, և գետինը ձիւնով այնպէս կը ծածկուի, որ ձի չի կրնար քալել : Ուստի հոն սուրհանդակները , փոխանակ ձիոյ, շուն կը դործածեն : Ան շուները վարժուած են քաշել տեսակ մը դահուկ, որոյ վրայ կը դնեն նամակի ծրարները, սուրհանդակն ալ անոր վրայ կը կենայ : Եթէ հարցնես թէ ոտիկանները ուր կ'երթան, կը պատասխանեմ թէ հոն ոտիկանները չկան. նախ՝ վասն զի նամակի ծրարներուն մէջ տակ չի դնեուիր, երկրորդ՝ վասն զի այն տեղերն մէջ ապաղակ չկայ :

ՓՈՔՐ ՏՂՈՒ ՄԸ ԽՕՍՔԸ

Բուհամայի մայրը կուտէ պէպէք մը չինելով անոր տուած էր որ դնէ : Օր մը Բուհամա իր պէպէքը դրկելով, «Ա, գառնուկս, մի լար, ա՛հ, մի լար,» կ'ըսէր, և խաղալիկը դժուելով կը համբուրէր : Բուհամայի մայրն, որ գիրք մը կը կարդար, այս միջոցին գիրքը վար դնելով իր աղջկան, «Բուհամա, ես ալ չպիտի կարդամ, եթէ ուզես կրնաս քովս գալ,» ըսաւ : Բուհամա իր պէպէքը գետնի վրայ թողուց, վազեց դէպ ի մայրը և զանի համբուրելով, « Ա՛հ, մայրիկս, քեզ շրչափ կը սիրեմ, » ըսաւ : Մայրն ալ «Քանի որ իմ սիրուն աղջիկս դիս կը սիրէ, որչափ ուրախ եմ,» ըսաւ , և հարցուց,«Բուհամա, դիս կը սիրես, բայց պէպէքդ ալ կը սիրես, այնպէս չէ՞ : Երբ ես գիրքս կը կարդայի տեսայ որ դուն զանի շատ կը սիրէիր և կը գգուէիր : » Աղջիկն ատոր պատասխանեց. «Ա՛յո՛, քիչ մը ժամանակի համար անի լինձ շատ քաղցր եկաւ, բայց եաքը ես անկէ ձանձրացայ : » Մայրն երբ հարցուց թէ «Ինչո՞ւ ձանձրացար,» Բուհամա , « Որովհետև ես զանի կը սիրեմ, բայց ան չկրնար դիս սիրել.» ըսաւ : Մայրն ալ, «Ուրեմն դիս անոր համար կը սիրես որ ես ալ քեզ կը սիրեմ,» հարցուց: Բուհամա, «Իմ քեզ սիրելուս մէկ պատճառն ատ է. բայց ուրիշ . . . » ըսաւ : Մայրը , «Ուրիշ ի՞նչ պատճառ ունիս,» հարցուց: Բուհամա, «Ուրիշ պատճառ ալ ունիմ. երբ ես փոքր էի և չէի կրնար գրել սիրել, դուն դիս կը սիրէիր, և ահա այս պատճառաւ քեզ աւելի կը սիրեմ,» ըսաւ: Մայրը մեկէն յիշեց Յովհաննէսի, «Մենք զանիկա կը սիրենք, ինչու որ առաջ անիկա մեզ սիրեց » խօսքը, և սկսաւ փառք տալ Աստուծոյ,

Տղայոց Աւետաբերի համար

ՍՈՒՐԲ ԳԻՐՔ ԿԱՐԴԱՑՈՂ ՓՈՔՐ ՏՂՈՑ ՀԱՄԱՐ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՄԸ

Հզօր և չար թագաւոր մը , որ ոչ Աստուծմէ և ոչ մարդոցմէ կը վախնար, բանակաւ պարսպաւոր քաղաք մը պաշարելու եկաւ : Թագաւորը քաղքին պարիսպը դեսպան մը ղրկեց, որ բարձրաձայն խօսեցաւ, որպէս զի աղեղնաւորք և բոլոր ժողովուրդը լսեն . և ըսաւ թէ երկնից Աստուածը կարող պիտի չըլլայ քաղաքն այն թագաւորին ձեռքէն ազատել, և խոստացաւ քաղքին բոլոր բնակչաց ներել , եթէ անոնք քաղքին դռները բանան : Պարսպին ներսը գտնուող ժողովրդեան վախը մեծ էր. բայց այն քաղաքին տիրող բարի թագաւորն այս մեծ տագնապին մէջ ապաւէն մ'ունէր: Աստուծոյ աղաղակեց , և Աստուած , որ միշտ իր ժողովրդեան կողմէն կը պատերազմի, այն ամբարտաւան թագաւորին բանակը զարկաւ և չարդեց: Մահուան հրեշտակը գիշեր ատեն չար թագաւորին բանակը մտաւ, և առաւօտուն հարիւր ութսուն և հինգ հազար դիակները դաշտին մէջ սփռեցան: Ան մեծ բանակը ղօրութենէն ՏԷրոջ հղօր բազկին ղօրութենէն սարսափած չփոթութեամբ փախչիլ սկսաւ :

Ո՛վ էր այն չար թագաւորը . ո՞ր քաղաքը պաշարեց. պաշարուած քաղաքին մէջ ո՞ր թագաւորը կը տիրէր:

Ա.ԻԵՏԱԲԵՐՆԵՐՈՒՆ ԳԻՆԵՐԸ

ԱՄՍԱԿԱՆ (Հայերէն, Հ. Լ Ց՝. ԵրուՏաճկերէն Լ՚ո-ւզբերէն), փոսթայի ծախքովՏարին 1/4 մէ.։10 հատ, մէկ անձի ուղղուած,2 1/4 մէ.։

ՇԱԲԱԹԱԿԱՆ (Հայերէն, Լ Հ. ԵրուՀ. Տաճկ.) փոսթայի ծախքով, տարին 1 1/2 արծ. մէ.։5 հատ, մէկ անձի ուղղուած, 6 3/4 մէ.։ Անկելիաֆօրօս , տարին 1 արծ. մէ. ։

Ամերիկայի միսիոնարաց ընկերութեան կողմէն
Խմբագիր Ճ. Բ. Կրէն

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԱՄԵԱՆ
Զազմազճըլար, Յակոբեան խան, Թիւ. 12.